



ԱՌՎՋՆՈՐԴՎՐԱՆ ՀՎՅՈՒ  
ՀԻՒՍԻՍԱՂՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՍԵԼ ԹԵՍԻ  
WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## ԱՐՁԱԿԱՆ ՆՈՐԾՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՎՅ ԲԱԿՈ ՍԱՐԱԿԵԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌՎՋՆՈՐԴՎՐԱՆԻՆ ՄԷԶ

Չորեքշաբթի, 21 Նոյեմբերի կեսօրին, Ազգային Առաջնորդարան այցելեց Արցախի նորընտիր նախագահ Բակո Սահակեան, որ, ինչպես ծանօթ է, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի աւանդական թելեթոնին ներկայ զլլալու համար, Լու Անձելըս ժամանած էր անցեալ շաբաթավերջին:

Նախագահական պատուիրակութեան մաս կը կազմէին Արցախի ընկերային հարցերու նախարարութի Տիկին Նայիրի Ազատեան, նախագահի աշխատակազմի անդամներէն՝ մամուլի հարցերու պատասխանատու Տիար Դաւիթ Պապայեան, եւ ԼՂՀ ներկայացուցիչ Ուաշինգթոնի մէջ Տիար Կարդան Բարսեղեան:

Նախագահ Սահակեան եւ իրեն ընկերացող պատուիրակութիւնը դիմաւրուեցան թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, պաշտօնական անձնաւրութիւններու, վարչական ու ներկայացուցչական դէմքերու կողմէ, որոնք ծափողջոյններով ընդառաջ եկան պատուիրակութեան: Ներկայ էին Հայաստանի հանրապետութեան Լու Անձելըսի մօտ գլխաւոր հիւպատոս Տիար Արմեն Լիլոյեան, Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երեց միաբաններէն Գերշ. S. Եփրեմ Արք. Թապագեան, Ազգ. Կեղրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքինեան, Հ.Յ.Դ. Բիլրոյի անդամ Տիար Վիգեն Յովսէփեան, Քալիֆորնիոյ խորհրդարանի անդամ Տիար Փոլ Գրիգորեան, »Հայաստան« Համահայկական Հիմնադրամի վարիչ տնօրէն Տիկին Մարիա Միհրանեան, Միացեալ Հայկական Հիմնադրամի գործադիր տնօրէն եւ Լինսի Հիմնարկի փոխ-նախագահ Տիար Յարութ Սասունեան, Հ.Յ.Դ. Կեղրոնական Կոմիտէի, Հայ Դատի, Հ.Մ.Ը.Ը.ի, ՀՕՄի եւ Համազգայինի Կեղրոնական ու Շրջանային վարչութեանց ներկայացուցիչներ, հայկական միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ, Ազգային Առաջնորդարանի բարերարներ, բարեկամներ, Եկեղեցիներու հոգաբարձութեանց ատենապետներ, Դաւթեան եւ Մարիամեան Կրթական Հաստատութեան, հայրենակցական միութեանց, Տիկնանց Օժանդակ Մարմինի եւ Առաքելութեան Տարածման յանձնախումբի անդամներ:

Առաջնորդարանի «Տիգրան եւ Զարուի Տեր Ղազարեան» սրահին մէջ, ճաշի սեղանի շուրջ մտերմիկ հանդիպումի ընթացքին, արձանագրուեցան ողջոյնի խօսքեր, որուն ընթացքին շեշտը դրուեցաւ թելեթոնին ճամբով հայութեան հայրենանուեր գործին վրայ, մանաւանդ որ

այս տարի նախապատութիւնը կը տրուի սահմանամերձ գիւղական շրջաններուն:

## PRESIDENT OF NAGORNO-KARABAKH BAKO SAHAKIAN VISITS THE WESTERN PRELACY

On Wednesday, November 21<sup>st</sup>, President of the Republic of Nagorno-Karabakh H.E. Bako Sahakian, who was in Los Angeles for the 10<sup>th</sup> international Armenia Fund Telethon, visited the Western Prelacy. The President was accompanied by Social Affairs Minister Mrs. Nayri Azadian, Press Secretary Mr. Tavit Babaian, and NKR representative in Washington Mr. Vartan Parseghian.

Upon their arrival, the President and delegation were welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, council members, and official guests including Consul General of the Republic of Armenia Armen Liloyan, H.E. Archbishop Yeprem Tabakian, Central Executive Council member Khajag Dikijian, A.R.F. Bureau member Viken Hovsepian, California Assemblymember Paul Krekorian, Armenia Fund President Maria Mehranian, Lincy Foundation Vice-President and United Armenia Fund President Harut Sassounian, representatives of A.R.F. Central Committee, A.N.C., Homenetmen and A.R.S. Central and Regional Executives, Prelacy sponsors, Board of Trustees Chairmen, and members of the Davidian-Mariamian Educational Foundation, Armenian compatriotic unions, Prelacy Ladies Auxiliary, and Outreach Committee.

During the reception which took place in the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall, guests had the opportunity to convey their remarks in which they stressed support for the Telethon which this year assisted border villages.

### ՀՈԼԻՎՈՒՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԻՄԱԿԴՐՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ, ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ԶԵՌԱՎՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԾԱԾԿԵՐՈՅԹ-ՄՈՍԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մեծ ընտանիքին համար տօնական օր մը եղաւ Կիրակի, 18 Նոյեմբեր 2007ը, հանդիսաւոր Նշումովը Եկեղեցւոյ հիմնադրութեան 30-ամեակին եւ Սարկաւագական ձեռնադրութեան կատարումով:

Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. եւ անմահ Պատարագը մատուցեց Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, իրեն առընթերակայ եւ Ս. Սեղամին սպասարկող ունենալով Քրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի գոյզ Վարիչներ՝ Գերա. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգէ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:


Սարկաւագական ծեռնադրութեան արժանացան Եկեղեցւոյ մէջ հասակ առած ու երկար տարիներ ծառայութիւն մատուցած չորս ուրարակիրներ. Սեղրակ Յովհաննէսեան, Շանթ Մանճըլիքեան, Սուրեն Յազարեան եւ Մանուկ Զովեան: Զեռնադրութեան ընթացքին խարտահիլակութիւն կատարեց եւ ծեռնադրեալը Սրբազն Յօր Ներկայացուց Եկեղեցւոյ հոգեւոր հովիլ՝ Արք. Տ. Վիգեն Աւ. Քիևյ. Վասիլեան:



Ս. Պատարագէն Ետք, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազն Յօր, «Կարապետեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ-մոմավառութիւն: Ներկայ էին Թեմիս ժողովականութեան, ինչպէս նաեւ միութեանց ու կազմակերպութեանց Ներկայացուցիչները:

Ապա տեղի ունեցաւ մոմավառութիւն: Ս. Կարապետ Մայր

Եկեղեցին գեղեցիկ աւանդութիւն է ստեղծած, որ ծեռնարկի ընթացքին պատուե Եկեղեցական կամ աշխարհական նուիրեալ ծառաներ, որոնց վաստակը մեծ է եղած ընդհանրապէս գաղութիս եւ յատկապէս Եկեղեցւոյ ծառայութեան մէջ: Այս տարուան համար Յոգաբարձութիւնը գեղեցիկ մտածումը ունեցած է պատուելու Եկեղեցւոյ Յոգեւոր հովիլ Արք. Տ. Վիգեն Աւ. Քիևյ. Վասիլեան, իր քահանայագործման 25 եւ Յոլիվուտի Եկեղեցւոյ մէջ ծառայութեան 9 ամեակներուն առթի:



Առինութեան խօսքը արտասանեց եւ փակման աղօթքը կատարեց Առաջնորդ Սրբազն Յայրը: Ան նախ շնորհաւորեց Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մէծ Ըստանիքը, իր 30-ամեակին առիթով, Տէր Յայրը՝ քահանայական օծման եւ ծեռնադրութեան 25 ամեակին առիթով, Եկեղեցւոյ բարերարուիին, Օծման կնքահայրը եւ Դաղլեան ընտանիքը՝ անոնց կատարած նուիրական բարերարութեանց համար: Սրբազնը նաեւ բարձր գնահատեց 30-ամեակի ծեռնարկի գործադիր յանձնախումբի անդամները:

Սրբազն Յօր Պահպանիչով եւ «Կիլիկիա» մաղթերգի հաւաքական կատարումով վերջ գտաւ օրուան հոգեզուարթ ծեռնարկը:

### **30<sup>TH</sup> ANNIVERSARY OF ST. GARABED CHURCH CELEBRATED WITH ORDINATION OF DEACONS AND BANQUET**

On Sunday, November 18<sup>th</sup>, the 30<sup>th</sup> anniversary of St. Garabed Church in Hollywood was celebrated with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who also conducted the ordination of deacons. Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, along with parish pastor Archpriest Rev. Vicken Vassilian, assisted the Prelate at the altar.

During Liturgy four stole-bearers were ordained by the Prelate; they were Setrag Hovannessian, Shant Manjelikian, Suren Hazarian, and Manuk Chulyan.

Following services a banquet and candle-lighting ceremony took place at “Karapetian” Hall during which, in keeping with tradition, the Board of Trustees honored a devoted servant of the church. This year, Rev. Vicken Vassilian was honored on his 25th anniversary of ordination, and as pastor of St. Garabed Church for the past nine years.

In his closing remarks the Prelate congratulated the church members on their 30<sup>th</sup> anniversary, the pastor for his 25 years of priesthood, the church’s benefactress, Godfather, and the Daghlian family for their benevolence, as well as the banquet organizing committee. The banquet concluded with the Prelate’s benediction and “Gligia”.

## ԽՐԻՍԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՎԱԽճԱՆՄԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՂԾ ԶԵՇՆԱՐԿ

Երեքաբթի, Նոյեմբեր 27-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, Կլենտելի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մեջ տեղի պիտի ունենայ Խրիմեան Յայրիկի վախճանման 100-ամեակին նուիրուած դասախոսական ձեռնարկ մը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազնակին:

Ձեռնարկը կազմակերպուած է Ազգային Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման յանձնախումբին կողմէ: Բանախոսն է Յոզէ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան: Պիտի իրագործուի գեղարուեստական յայտագիր: Մուտքը ազատ է, իսկ աւարտին, տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն:

## COMMEMORATION OF THE 100<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE PASSING OF KHRIMIAN HAYRIG

On Tuesday, November 27<sup>th</sup>, at 7:30 p.m., the 100<sup>th</sup> anniversary of the passing of Khrimian Hayrig will be commemorated with a lecture at St. Mary’s Church. The event is being held under the auspices of the Prelate and has been organized by the Western Prelacy Outreach Committee. The keynote speaker is Very Rev. Fr. Barthev Gulumian. An artistic program will also take place as well as a reception following the lecture. Admission is free and open to the public.